

«ՆայՌ-ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից բնական գազի ներկրման լիցենզիայի

Պայմանները

1. Սահմանումներ

Լիցենզիայի պայմաններում օգտագործված որոշ հասկացություններ սահմանվում են հետևյալ կերպ.

Քաշխող` բնական գազի բաշխման լիցենզիա ստացած իրավաբանական անձ.

Նանձնաժողով` Նայասրանի Նանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողով .

Լիցենզիա` Նանձնաժողովի կողմից իրավաբանական անձին տրված փաստաթուղթ, որը հավաստում է էներգետիկայի բնագավառում սահմանված պայմաններով Նայասրանի Նանրապետություն բնական գազի ներկրման գործունեություն իրականացնելու իրավունք.

Լիցենզավորված անձ` «ՆայՌ-ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերություն, որը Լիցենզիայով իրավունք է ստացել բնական գազ ներկրել Նայասրանի Նանրապետություն.

Ներկրող` Նայասրանի Նանրապետություն բնական գազի ներկրման գործունեություն իրականացնելու Լիցենզիա ստացած իրավաբանական անձ.

Փոխադրող` բնական գազի փոխադրման Լիցենզիա ստացած իրավաբանական անձ.

Սպառող` այնպես ինչպես սահմանված է «Էներգետիկայի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքում.

Բնական գազի բաշխման ցանց կամ Բաշխման ցանց` բաշխիչ գազամուղների, գազակարգավորիչ կետերի և տեղակայանքների, դրանց հուսալի և անվտանգ շահագործման համար անհրաժեշտ սարքավորումների տեխնիկական համակարգ, որի միջոցով իրականացվում է բնական գազի առաքումը (գազամատակարարումը) որոշակի փարածքում տեղաբաշխված Սպառողներին.

Բնական գազի փոխադրման ցանց կամ Փոխադրման ցանց` բնական գազի մայրուղային գազամուղների, գազաբաշխիչ կայանների, գազի պահեստարանների, կոմպրեսորային կայանների, դրանց հուսալի և անվտանգ շահագործման համար անհրաժեշտ սարքավորումների ու օպերատիվ կառավարման համալիրների (ներառյալ՝ կենտրոնական կարգավարական ծառայությունը) կազմակերպական, տեխնիկական և /կամ/ փնտեսական կապերով ու աշխատանքային ռեժիմներով միավորված համակարգ, որի միջոցով իրականացվում է բնական գազի փոխադրումը (տեղափոխումը) ներկրման, արտադրության (արդյունահանման) Լիցենզիա ունեցող անձանցից բնական

գազի արտահանման, բաշխման Լիցենզիա ունեցող անձանց, իսկ առանձին դեպքերում՝ անմիջապես Սպառողներին, և որի սահմանազարման կետերն են՝

- ա) Նայասպրանի Նանրապերության պերական սահմանի այն կետերը, որտեղ Փոխադրողի գազարարները միանում են հարևան երկրի գազարարներին,
- բ) Փոխադրողի և Բաշխողի գազարարների միացման հանգույցները.

Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք սրեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղբյուրները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պրպահողմները, նաև սարորաժային գործողություններ, ահաբեկչություններ, պարերազմներ, ապսրամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդորում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա սրանձնած ցանկացած պարրավորության կարարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. Լիցենզիայի գործողության ժամկետը

- 2.1. Լիցենզիան ուժի մեջ է մրնում 2003 թվականի հունվարի 1-ից:
- 2.2. Լիցենզիայի գործողության ժամկետն է մինչև 2003 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. Լիցենզավորված գործունեության էությունը կազմող գործառույթները

- 3.1. Լիցենզիան ուժի մեջ մրնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է սրվում և պարրավորեցվում է իրականացնել Լիցենզիայի անբաժանելի մասը կազմող «**ITERA International Energy L.L.C**» ընկերության և «**ՆայՌ-ուգազարդ**» փակ բաժնետիրական ընկերության միջև 2001 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված **№ 03-590/01** պայմանագրով նախարեսված՝ Նայասպրանի Նանրապերություն բնական գազ ներկրելու լիցենզավորվող գործունեության էությունը կազմող հերևյալ գործառույթները.

ա) սկսած 2003 թ. հունվարի 1-ից մինչև 2003 թ. դեկտեմբերի 31-ը
(տարի, ամիս, օր.) (տարի, ամիս, օր.)

բնական գազի մինչև 1625000 (մեկ միլիոն վեցհարյուր քսանհինգ հազար) հազար նիսմ,

2004 թ. հունվարի 1-ից մինչև 2004 թ. դեկտեմբերի 31-ը
(տարի, ամիս, օր.) (տարի, ամիս, օր.)

մինչև 1675000 (մեկ միլիոն վեցհարյուր յոթանասունհինգ հազար) հազար նիսմ,

մինչև 1675000 (մեկ միլիոն վեցհարյուր յոթանասունհինգ հազար) հազար նիստ
քանակության ներկրում Նայասպանի Նանրապետություն.

բ) ներկրված բնական գազի վաճառք էներգետիկայի բնագավառում
գործունեության Լիցենզիա ունեցող անձանց և /կամ/ սպառողներին:

3.2. Լիցենզավորված անձն իրավունք չունի լիցենզավորված գործունեության էությունը
կազմող գործառույթները պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին
կամ մասնակի օտարել, զիջել կամ փոխանցել մեկ այլ անձի՝ առանց Նանձնաժողովի
հետ համաձայնեցնելու:

4. Լիցենզավորված գործունեության պայմանները

4.1. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունը պետք է իրականացնի
տնտեսական արդյունավետության սկզբունքներին, գործող նորմատիվ-իրավական
ակտերին համապատասխան:

4.2. Լիցենզավորված անձը չի կարող սույն Լիցենզիան օգտագործման փայ, օտարել
կամ գրավադրել այլ անձանց՝ առանց Նանձնաժողովի հետ համաձայնեցնելու և
Լիցենզիայում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ
կատարելու: Սույն Լիցենզայի գործողությունը չի փարսավում Լիցենզավորված
անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով
գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի
մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

4.3. Լիցենզավորված անձն առանց Նանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ
Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր,
փայատեր կամ միավորվել Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:

4.4. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի
մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայատերը առանց Նանձնաժողովի
թույլտվության իրավունք չունի ձեռք բերել Լիցենզավորված անձի կամ մեկ այլ
գործունեության լիցենզիա ունեցող անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս,
բաժնեմաս կամ ունենալ փայամասնակցություն, ինչպես նաև վաճառել 25 տոկոս և
ավելի բաժնետոմսեր:

4.5. Լիցենզավորված անձի կողմից կնքվող բնական գազի առքուվաճառքի, ինչպես նաև
գազի փոխադրման և/կամ/ բաշխման ծառայություններ իրականացնող անձանց
հետ կնքվող պայմանագրերը պետք է համապատասխանեն Նանձնաժողովի կողմից
սահմանված պայմանագրերի օրինակելի ձևերին:

4.6. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում լիցենզավորված
գործունեություն իրականացնող այլ անձանց միջև կնքվող առքուվաճառքի
պայմանագրերը պետք է գրանցվեն Նանձնաժողովում:

4.7. Լիցենզավորված անձը, Նանձնաժողովի կողմից սահմանված կարգին ու ձևերին
համապատասխան, Նանձնաժողով է ներկայացնում տեղեկատվություն և
հաշվետվություններ՝

- ա) բանկերում ունեցած հաշիվների մասին,
- բ) անցած ժամանակաշրջանի գործունեության մասին,
- գ) հաջորդ հաշվարկային ժամանակաշրջանի ֆինանսադրամական ցուցանիշների կանխատեսումների մասին,
- դ) ներկարժամկետ և կարճաժամկետ վարկային ծրագրերի մասին՝ համապարասխան հիմնավորումներով:

- 4.8. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապարասխանեն ՏՏ օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման պահանջներին:
- 4.9. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է առանձնացված լինեն Լիցենզավորված անձի կողմից իրականացվող գործունեության այլ տեսակների հաշվապահական հաշվառումից և հաշվետվությունից:
- 4.10. Լիցենզավորված անձը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 30-ը, հանրապետական մամուլում հրապարակել նախորդ տարվա իր գործունեության ֆինանսադրամական հաշվետվությունը՝ համաձայն Նանձնաժողովի կողմից սահմանված ձևերի: Եթե Լիցենզիայի գործողության ժամկետը պակաս է մեկ տարուց, ապա նշված հաշվետվությունը պետք է հրապարակվի Լիցենզիայի ժամկետը լրանալուց հետո չորս ամսվա ընթացքում: Նրապարակված հաշվետվությունները չպետք է պարունակեն պետական և ծառայողական գաղտնիքներ:
- 4.11. Լիցենզավորված անձը պարտավոր է Նանձնաժողովի պահանջով իրականացնել իր ֆինանսադրամական գործունեության անկախ աուդիտ, այդ թվում՝ Նանձնաժողովի կողմից առաջադրված առանձին խնդիրների վերաբերյալ:
- 4.12. Բնական գազի վաճառքի, ինչպես նաև գազի փոխադրման և բաշխման ծառայությունների սակագները սահմանում է Նանձնաժողովը: Սակագները վերանայելիս Նանձնաժողովի կողմից սահմանված սակագներից ցածր սակագներ կիրառելու հետևանքով Լիցենզավորված անձի հնարավոր վնասները հաշվի չեն առնվում:
- 4.13. Լիցենզիայի գործողության ընթացքում Լիցենզավորված անձն իր նախաձեռնությամբ, Նանձնաժողովի կողմից սահմանված կարգին ու ձևերին համապարասխան, կարող է հայտ ներկայացնել իր կողմից վաճառվող գազի սակագնի վերանայման վերաբերյալ:
- 4.14. Նանձնաժողովն իր նախաձեռնությամբ և իր կողմից սահմանված ընթացակարգով կարող է վերանայել Լիցենզավորված անձի կողմից վաճառվող գազի սակագինը՝ հիմնվելով Լիցենզավորված անձի ֆինանսադրամական հաշվետվությունների և (կամ) անկախ աուդիտի արդյունքների վրա:
- 4.15. Լիցենզավորված անձի կողմից ներկրվող բնական գազի որակական հարկանիշները պետք է համապարասխանեն ԳՈՍՏ 554287 «Բնական վառելիքային գազեր արդյունաբերական և կոմունալ-կենցաղային նպատակների համար: Տեխնիկական պայմաններ»-ին:

- 4.16. Նանձնաժողովի կողմից սահմանված ֆինանսատնայնության հաշվետվությունների համակարգում փոփոխություններ կատարելու դեպքում Նանձնաժողովն այդ մասին ծանուցում է Լիցենզավորված անձին:
- 4.17. Լիցենզավորված անձը, Նայասրանի Նանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, պարասխանավորություն է կրում Նանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության հաշվետվության և այլ տեղեկատվության հավաստիության համար:
- 4.18. Նանձնաժողովի կողմից սահմանված ՏՏ ներքին շուկայում գազի վաճառքի, փոխադրման և բաշխման ծառայությունների սակագներն ուժի մեջ են մտնում համապարասխան որոշման հրապարակումից 30 օր հետո:
- 4.19. Նանձնաժողովը բնական գազի վաճառքի սակագների մեջ հաշվի է առնում միայն այն ծախսերը, որոնք հիմնավորված և անհրաժեշտ են Լիցենզավորված գործունեությունն իրականացնելու համար:
- 4.20. Լիցենզավորված անձը պարտավոր է անմիջապես հայտնել Նանձնաժողովին այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել սույն Լիցենզիայի պայմանների խախտումների:
- 4.21. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել Փոխադրող համակարգի օպերատորի օպերատիվ հրահանգները և կարգադրությունները՝ համաձայն կնքված պայմանագրի:
- 4.22. Լիցենզավորված անձը պարտավոր է Նանձնաժողով և Փոխադրող համակարգի օպերատորին անհապաղ հայտնել բնական գազի ներկրման նախատեսված ծավալների փոփոխությունների մասին:
- 4.23. Եթե Նայասրանի Նանրապետություն գազ ներկրելու Լիցենզիա ստացել են մեկից ավելի անձինք, ապա յուրաքանչյուրի փաստացի մասնաբաժինը Նայասրանի Նանրապետության սահմանում որոշվում է նրանց միջև կնքված հարուկ պայմանագրով ամրագրված սկզբունքով: Ներկրողների միջև գազի մասնաբաժինների որոշման վերաբերյալ պարաձայնությունները սահմանված կարգով քննարկվում են Նանձնաժողովում:

5. Լիցենզավորված գործունեության վերահսկում

- 5.1. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումը իրականացնում է Նանձնաժողովը:
- 5.2. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Նանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք: Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Նանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:
- 5.3. Նանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ընկերության ներքին կանոնակարգը, ինչպես նաև ՏՏ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

6. Տուժանքներ

- 6.1 Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պարզաճ կատարելու կամ խախտելու դեպքում, ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածով, Նանձնաժողովը իրավասու է կիրառել հետևյալ փուլերը.
- ա) նախագուշացում,
 - բ) սակագների նվազեցում,
 - գ) Լիցենզիայի կասեցում,
 - դ) Լիցենզիայից գրկում:

Նշված փուլերի կիրառման կարգը սահմանում է Նանձնաժողովը:

- 6.2 Լիցենզավորված անձին Լիցենզիայից գրկելու դեպքում Նանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» ՆՏ օրենքի 52-րդ հոդվածով և ՆՏ օրենսդրությամբ:
- 6.3 Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա: Մինչև Լիցենզիայի կասեցման կամ գրկման մասին Նանձնաժողովի կողմից համապատասխան որոշում կայացնելը, Լիցենզավորված անձը պարտավոր է շարունակել իրականացնել գործունեությունը՝ ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» ՆՏ օրենքի 52-րդ հոդվածով և համաձայն Լիցենզիայի պայմանների:
- 6.4 Լիցենզավորված անձը չի ենթարկվում պարասխանապլության՝ սույն Լիցենզիայի 6.1 կետով սահմանված կարգով, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս մաժորային հանգամանքների հետևանք են:

7. Լիցենզիայի պայմանների փոփոխություն, Լիցենզիայի կրկնօրինակի տրամադրում

- 7.1 Լիցենզիայում փոփոխություններ կատարվում են Լիցենզավորված անձի կամ Նանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Նանձնաժողովի կողմից սահմանված կարգով՝ հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՆՏ օրենքի 30-րդ հոդվածի պահանջները:
- 7.2 Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվան կամ գրնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած՝ 15-օրյա ժամկետում հայտ ներկայացնել Նանձնաժողով Լիցենզիայի վերաձևակերպման համար՝ կցելով նշված փոփոխությունները հավաստող համապատասխան փաստաթղթեր՝ հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածը:
- 7.3 Լիցենզավորված անձը 15-օրյա ժամկետում ծանուցագրով փոփոխություն է Նանձնաժողովին իր իրավաբանական հասցեում, հիմնադիր փաստաթղթերում և բանկային հաշվեհամարներում փոփոխությունները ունեցած փոփոխությունների մասին:
- 7.4 Լիցենզավորված անձի բաժնետերերի (հիմնադիրների) փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է դիմել Նանձնաժողով՝ Լիցենզիայի պայմաններում անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ կատարելու համար:
- 7.5 Լիցենզիայի կորստի (կորցնելու, ոչնչանալու և այլն) կամ գործողության ժամկետի երկարաձգման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է հայտ ներկայացնել Նանձնաժողով: Լիցենզիայի կրկնօրինակի ստացման և (կամ) ժամկետի երկարաձգման ընթացակարգերը կարգավորվում են Նանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտով:

8. Ծանուցում

- 8.1. Լիցենզիայի վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները պետք է լինեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով կամ պարվիրված նամակով: Ցանկացած ծանուցում կամ հաղորդագրություն ուժի մեջ կհամարվի սրացման պահից կամ, եթե այն չի սրացվել հասցեատիրոջ մեղքով՝ ներկայացման պահից: